# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 3

Փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի 2024 թվականի
Հոկտեմբերի 23-ին կայացած գիտխորհրդի նիստի

Օրակարգում՝

1. Հոգեբանական գիտահետազոտական կենտրոնի թափուր պաշտոնների համալրման մրցույթ:
2. Միջանկյալ քննությունների նախապատրաստական աշխատանքները ֆակուլտետում:
3. Բակալավրիատի կրթական ծրագրերի հավատարմագրման հետ կապված փոփոխությունների մասին /զեկ․՝ծրագ․ ղեկավ․ պրոֆ․ Վ․ Պապոյան, դոց․ Ս․ Պետրոսյան/:
4. «Ընտանիքի հոգեբանություն» կրթական ծրագրի թեզերի թեմաների հաստատում:/զեկ․՝ծրագրի ղեկավար դոց․ Ն․ Հարությունյան/
5. Ասպիրանտների ատենախոսությունների թեմաների հաստատում:
6. Տպագրության երաշխավորման հարց /պրոֆ․ Ս․ Ա․ Զաքարյանի «Հայոց փիլիսոփայության պատմություն» դասագիրքը/:
7. Ընթացիկ հարցեր.

   1.Հանդիպում ԵՊՀ արհմիության նախագահ Ռ․ Կ․ Սերոբյանի հետ:

   2. Հեռակա ուսուցմամբ «Կիրառական հոգեբանություն» մասնագիտացմամբ մագիստրատուրայի ընդունելության մասին:

   3․ Ասպիրանտուրայի ընդունելության նոր կարգի մասին հարցը /զեկ․ դոկ․ կրթության կենտրոնի տնօրեն դոց․ Ա․ Սարգսյան/

1. Ա. Բաղդասարյանը ծանոթացրեց օրակարգին, որի համաձայն ներկայացվեցին Հոգեբանական գիտահետազոտական կենտրոնի թափուր պաշտոնների համալրման մրցույթի մասնակիցները, ձևավորվեց մրցութային հանձնաժողով հետևյալ կազմով՝ Սողոմոնյան Գագիկ, Պետրոսյան Գագիկ և Ղազարյան Թերեզա:
Մրցույթի արդյունքները հետևյալն էին՝

1. Ստեփանյան Լ. Ս (ավագ գիտաշխատող)-24 մասնակիցներից քվեարկել էին 21 կողմ, դեմ 2, անվավեր 1:
2. Ալախվերդով Մ. Վ (ավագ գիտաշխատող)- 24 մասնակիցներից քվեարկել էին 20 կողմ, դեմ 3, անվավեր 1:
3. Պապոյան Վ. Ռ (գիտաշխատող)-24 մասնակիցներից քվեարկել էին 23 կողմ, դեմ 1:

2. Միջանկյան քննությունների նախապատրաստական աշխատանքները ներկայացրեցին ամբիոնի վարիչները: Քննության համար բոլոր աշխատանքները կատարված են:

3. Բակալավրիատի կրթական ծրագրերի հավատարմագրման հետ կապված փոփոխությունների մասին /զեկ.՝ ծրագ. ղեկավ. պրոֆ. Վ. Պապոյան, դոց. Ս. Պետրոսյան/:

Վ. Պապոյանը ներկայացրեց այն բոլոր փոփոխությունները, որոնք նախատեսված են 24-25 թթ.-ի և 25-26թթ. համար:

1. Անհրաժեշտ է, որ բոլոր ամբիոններից մեկական առարկա իրենց դասընթացներում ունենան օտար լեզվով դասավանդման երկու թեմա:
2. Ինչ վերաբերում է միջանկյալ քննությունների անցկացմանը՝ առաջարկվեց հավելյալ ժամ տրամադրել քննություններին մասնակցած սեմինարներին, որը կընդգրկվի ծանրաբեռնվածության մեջ կամ կվարձատրվի ժամավճար:
3. Անհրաժեշտ է, որ դասավանդվող բոլոր առարկաները դասախոսների կողմից նկարագրված լինեն՝ նպատակ, խնդիրներ, բովանդակություն:

4. Հետազոտական բաղադրիչը, որը փոխարինում է կուրսային աշխատանքները, պետք է ունենան հստակ մեթոդաբանություն և հեռազոտականություն:

5. Խրախուսվեն հետբուհական կրթության վերապատրաստվող մասնակիցները:

6. Դասախոսները ներկայացնեն և հնարավորինս չափելի դարձնեն ուսանողների կողմից առարկաների վերջնարդյունքների տիրապետումը: Դա վերաբերում է ավարտական աշխատանքներին ևս:

7. Նախատեսվում է իրականացնել բակալավրիատում ուսանողների համար միջդիսցիպլինար և միջֆակուլտետային աշխատանքներ:

Ս. Պետրոսյանը մանրամասն ներկայացրեց օտար լեզվով առարկաների դասավանդման պահանջը, որը հանդիսանում է բուհերի և կրթական ծրագրերի հավատարմագրման նախապայման:

4. «Ընտանիքի հոգեբանություն» կրթական ծրագրի թեզերի թեմաների հաստատում:/զեկ.՝ ծրագրի ղեկավար դոց. Ն. Հարությունյան/

Ն. Հարությունյանը ներկայացրեց ավարտական աշխատանքների ցանկը, որը երաշխավորվեց ֆակուլտետի կողմից:

5. Ասպիրանտների ատենախոսությունների թեմաների հաստատում:

Ներկայացվեցին հետևյալ թեմաները՝

1. «Տրավմատիկ փորձով/փորձառությամբ անցած երիտասարդների անձնային նարատիվների առանձնահատկությունները (տեղահանված արցախցիների օրինակով)»- գիտական ղեկավար Անձի հոգեբանության ամբիոնի վարիչ՝ Ն. Գ. Խաչատրյան, ասպիրանտ՝ Ծ. Միքայելյան

2. «Ուսանողների մասնագիտական ինքնականության և սուբյեկտիվ բարեկեցության վրա կրթական միջավայրի ազդեցության համեմատական հետազոտություն (Գերմանիայի և Հայաստանի հումանիտար ֆակուլտետների օրինակով)- գիտական ղոկավար ՝ Հ. Մ. Ավանեսյան, ասպիրանտ՝ Վիոլետա Մոսինյան

6. Պրոֆ. Ս. Ա. Զաքարյանի «Հայոց փիլիսոփայության պատմություն» դասագիրքը երաշխավորվեց տպագրության

7. Ընթացիկ հարցեր.

1. Հանդիպում ԵՊՀ արհմիության նախագահ Ռ. Կ. Սերոբյանի հետ:

Ռ. Կ. Սերոբյանը հանդիպման ընթացքում ներկայացրեց արհմիության գործառույթները, հեռահար նպատակները և առաջարկեց հանդիպման պատրաստակամություն:

2. Հեռակա ուսուցմամբ «Կիրառական հոգեբանություն» մասնագիտացմամբ մագիստրատուրայի ընդունելության մասին:

Մագիստրատուրայում կա 11 ուսանող:

3. Ասպիրանտուրայի ընդունելության նոր կարգի մասին հարցը /զեկ. դոկ. կրթության կենտրոնի տնօրեն դոց. Ա. Սարգսյան/

Ա. Սարգսյանը ծանոթացրեց ասպիրանտուրայի հայտի նոր կարգին, որի համաձայն ասպիրանտ ղեկավարելու թույլտվություն ունեցող մասնագետը ինքն է ներկայացնում ասպիրանտական հայտը ԿԳԿ-ն կայքում՝ հիմնավորելով թեման և ստանալով ֆակուլտետի կողմից դրական եզրակացություն հայտարարվում է մրցույթ:

4. 4-րդ կուրսի ուսանողուհի ԵՊՀ ՈւԽ-ի նախագահ Լ. Եղիազարյանը բարձրացրեց հետևյալ հարցերը. Ուսանողները կամընտրական առարկաներ ընտրելիս չեն կեղմնորոշվում, քանի որ չկա տեղեկատվություն առարկաների վերաբերյալ, բողոքներ հնչեցին նաև մասնագիտական առարկաների կրճատման վերաբերյալ, փոխարենը ավելացել են ինքնուրույն ածխատանքները և հետազոտական բաղադրիչները

Նիստի նախագահ՝ Ա. Բաղդասարյան

Նիստի քարտուղար՝ Վ. Պապոյան